ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ 25/22

ք. Եղեգնաձոր **15 փետրվարի 2022թ.**

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանը, ի դեմս մարզպետարանի գլխավոր քարտուղար՝ Ա.Կարապետյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Հերհերի միջնակարգ դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպությանը, ի դեմս Կազմակերպության տնօրեն Ե.Ոսկանյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2121-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում) և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 21-ի N47-Ն հրամանը 1146 «Հանրակրթություն» ծրագրի «12002. Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծախսերի փոխհատուցում» միջոցառման (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով մարզպետարանը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ մինչև 331,600 (երեք հարյուր երեսունմեկ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածում:

1.3 Սույն պայմանագրի գինը կարող է փոխվել ուսումնական տարվա սկզբի դրությամբ տրանսպորտային ծառայությունից օգտվող մանկավարժների և դպրոցահասակ երեխաների փոփոխության հետ կապված:

2.Ընթացիկ դրամաշնորհներ տրամադրելու և ծախսելու կարգը

2.1. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի հավելվածում նշված նպատակներին համապատասխան:

2.2. Կազմակերպությունը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան և ապահովի սույն պայմանագրի ծրագրով նախատեսված նպատակների իրականացման հետ կապված փաստաթղթերին ծանոթանալու՝ Մարզպետարանի ներկայացուցչի հնարավորությունը:

2.3. Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո Կազմակերպությունը սահմանված կարգով ,յուրաքանչյուր ամիս մարզպետարան է ներկայացնում հաշվետվություն՝ նախորդ ամսվա փաստացի հաճախումների մասին;

2.4 Մարզպետարանը նշված հաշվետվությունը ստանալուց հետո յուրաքանչյուր ամիս նախորդ ամսվա փաստացի հաճախումների արդյունքների մասին ստացված տեղեկատվության հիման վրա օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է ամենամսյա ֆինանսավորում:

3.Հաշվետվությունը

3.1. Հաշվետվությունը ներկայացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.. Այլ դրույթներ

4.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում են 2022 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը

4.2.Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

4.3. Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5.Կողմերի իրավաբանական հասցեները

Նվիրատու	*Նվիրառու*
ՀՀ Վայոց Ձորի մարզպետարան ք. Եղեգնաձոր, Շահումյան- 5 ՀՀ ֆինանսական գործ վարչ հ/հ 900351056024 ՀՎՀՀ 08907717 Գլխավոր քարտուղար Ա.Կարապետյան	Հերհերի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ ՀՀ Վայոց Ձորի մարզ, գ.Հերհեր ՀՀ ֆինանսական գործ վարչ հ/հ 900348000127 ՀՎՀՀ 09101721 Տնօրեն Ե.Ոսկանյան

Հավելված
2022թ. Փետրվարի 15-ին կնքված
N 25/22 պայմանագրի

Միջոցառումներ

Իրականացվելիք միջոցառումներ						
N	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետ	Պահանջվող գումարը (դրամ)
1	Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծախսերի փոխհատուցում	Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և աշակերտների տրնասպորտային ծախսերի փոխհատուցման ապահովում	2 մանկավարժի տրանսպորտային ծախսերի փոխհատուցում	Դասապրոցեսը պատշաճ կերպով կազմակերպելու նպատակով ուսուցիչների և աշակերտների ներկայության ապահովում դպրոցում	30.12.2022թ	331,600
			_ աշակերտների տրանսպորտային ծախսերի փոխհատուցում		-	-
Ընդամենը					**331,600**	

Նվիրատու

ՀՀ Վայոց Ձորի մարզպետարան
ք. Եղեգնաձոր, Շահումյան-5
ՀՀ ֆիննախ գործ վարչ
h/h 900351056024
ՀՎՀՀ 08907717
Գլխավոր քարտուղար _____
Ա.Կարապետյան

Նվիրառու

Հերհերի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ
ՀՀ Վայոց Ձորի մարզ, գ.Հերհեր
ՀՀ ֆիննախ գործ վարչ
h/h 900348000127
ՀՎՀՀ 09101721
Տնօրեն _____
Ե.Ոսկանյան